# Թեման՝ Մեդիագրագիտության ուսուցումը հասարակագիտության դասաժամերին



**Դասընթացավար՝**
**Հերմինե Գևորգյան**
***Գեղարքունիքի մարզի Ծովագյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոցի ուսուցչուհի***

**Դասարանը՝ 7-րդ**

# Դասի թեման՝Արդյունավետ հաղորդակցում



Մարդկային շփումն ամենամեծ շքեղությունն է:

Ա.դը Սենտ-Էքզյուպերի

# Նպատակ՝



- Ձևավորել արդյունավետ հաղորդակցման կարևորությունը արժևորելու հմտություն
- Զարգացնել արդյունավետ հաղորդակցման կարողություններ
- Զարգացնել մեդիագրագիտության հմտություններ

# Վերջնարդյունք

- Նկարագրի  հաղորդակցման տեսակները և մենախոսության խոսքային և ոչ խոսքային հաղորդակցման առանձնահատկությունները:
- Տարբերակի վստահելի մեդիան ոչ վստահելի տեղեկատվության աղբյուրից:
- Արժևորի  մեդիայի՝ որպես միջնորդավորված հաղորդակցության  կարևորությունը



## Կիրառվող մեթոդներ և հնարներ

- 5E-երով դաս,
- կենտրոններով աշխատանք

### ՀՊՉ վերջնարդյունքներ՝

- Հ2, Հ12,Հ13,, Հ25, Հ30



### Խաչվող հասկացություններ

- Օրինաչափություն,
- Պատճառ և հետևանք

# Դասի ընթացքը

***1.Engage-ներառում,խթանում/4ր/***

Դասը սկսել խորհրդավոր արկղիկի մասին ներկայացնելով: Սովորողներին ասել, որ արկղում պահված է մի բան, որն առաջացել է Ճապոնիայիում, կապ ունի հաղորդակցման հետ, հետագայում տարածվել է ամբողջ աշխարհում: Փորձում են կռահել: Երբ սովորողների հետաքրքրությունն արդեն շարժվել է, հայտնում ենք դասի թեման, նպատակներն ու վերջնարդյունքները:



## *2.Explore –հետաքննում*

**Դասարանը բաժանվում է խմբերի՝ կենտրոններով աշխատանքի համար: Ստեղծվում է 4 կենտրոն.**

***1.Բացահայտողների կենտրոն***

***2.Հետազոտողների կենտրոն***

***3.Ստեղծագործողների կենտրոն***

***4.Հարցասերների կենտրոն***



## ***Կենտրոններով աշխատանք***

*1.<u>Բացահայտողների կենտրոնին</u>* հանձնարարելբացահայտել արդյունավետ հաղորդակցման տեսակների առանձնահատկությունները, բանավոր և գրավոր հաղորդակցման առավելությունները և թերությունները:

*2.<u>Յետազոտողների կենտրոնին</u>* հանձնարարել ուսումնասիրել մեդիայում առավել հաճախակի հանդիպող շփոթեցնող հայտարարությունները, գլխագրերը, մարդկանց գրավելուն միտված արտահայտչամիջոցները:

# *Կենտրոններով աշխատանք*

*3.<u>Ստեղծագործողների կենտրոնին</u>* հանձնարարել ներկայացնել արդյունավետ հաղորդակցման միջոցների և մեդիայի ոչ հավաստի աղբյուրից տեղեկատվություն ստանալու հետևանքների մասին դերախաղ կամ այլ ստեղծագործական աշխատանք:

*4.<u>Հարցասերների կենտրոնին</u>* հանձնարարել ուղղորդված աշխատանքի արդյունքում ձեռքի տակ եղած միջոցների/հեռախոս, համակարգիչ/ օգնությամբ ուսումնասիրել մեդիագրագիտության որոշ կանոններ և դրանց վերաբերյալ հարցեր կազմել մյուս խմբերի համար:



- Սահմանել ժամանակ աշխատանքի համար:

- Ավարտից հետո յուրաքանչյուր խումբ կներկայացնի իր աշխատանքը հատկացված ժամանակում

3.Explain-Բացատրում/ 4ր/

Խմբային աշխատանքի ավարտից հետո դիտել 2-3 րոպե տևողությամբ սահիկ մեդիագրագիտության մասին: Կրկին անդրադառնալ խորհրդավոր արկղիկին, ցույց տալ արկղիկում պահված իրը /պահված է էմոջի/ զմայլիկ//:



4.Elaborate-Ամրապնդում /4ր/

Թեման ուսումնասիրելուց հետո սովորողների հետ քննարկել մեդիագրագիտության կարևորությունը, մեդիագրագետ քաղաքացու որակները:





## 5.Evaluate-Գնահատում

Գնահատումն իրականացնել գնահատման անիվի միջոցով:




**Տնային առաջադրանք՝**

Սովորողներին ուղարկել «Մեդիամարտ» խաղի հղումը, հանձնարարել տանը խաղալ, հաջորդ դասին կիսվել տպավորություններով և սովորածով:

https://media.am/mediabattle/

# Օգտագործված գրականություն

- «Հասարակագիտություն 7» դասագիրք հանրակրթական դպրոցի համար, Զանգակ հրատարակչություն, 2023թ.
- Հանրակրթության պետական չափորոշիչ
- Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հասարակագիտություն» առարկայի 7-րդ դասարանի ծրագիր, 2022թ.
- «Ուսուցման արդյունավետ հնարներ» , հեղ. Սերոբ Խաչատրյան, 2020թ.
- «Մեդիագիտություն» ձեռնարկ դասավանդողների համար 2022թ.



- Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում:

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Երևան, Տիգրան Մեծի 67
Հեռ· 033 572100
https://kznakhimnadram.blogspot.com/